



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄ № 12Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՍԱՐ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2018 թվականի մայիսի 18-ին, քննարկելով ՀՀ սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղում թեկնածու առաջարկելու վերաբերյալ հարցը, հիմք ընդունելով ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողովի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի դատավոր Ելիզավետա Ռեմիկի Դանիելյանին ՀՀ սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու ընտրելու վերաբերյալ արձանագրությունը և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասով, 213-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետով և 75-րդ հոդվածով

ՈՐՈՇՈՒՄ Է

ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից որպես ՀՀ սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու ընտրված՝ ՀՀ վճռաբեկ դատարանի դատավոր Ելիզավետա Ռեմիկի Դանիելյանի թեկնածությունն առաջարկել ՀՀ Ազգային ժողովին՝ ՀՀ սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղում ընտրելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

2018թ. մայիսի 18
ք. Երևան